ԼՂՀ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԼՂՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Նշված տարածքները ժամանակավորապես գտնվում են հակառակորդի վերահսկողության տակ

ԲԱԺԻՆ 1

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ

Մեթոդաբանական պարզաբանումներ

Առկա բնակչության թվաքանակի ցուցանիշում ներառված են մարդահամարի ժամանակ մշտապես ներկա և ժամանակավոր ներկա հաշվառված անձանց ընդհանուր թվաքանակները:

Մշտապես ներկա են համարվել տվյալ համայնքում հաշվառված՝ մարդահամարի պահին ներկա անձինք և տվյալ համայնքում չհաշվառված, սակայն, մարդահամարի հաշվառման պահի դրությամբ այդտեղ մեկ տարուց ավելի տևողությամբ բնակվող ներկա անձինք:

Ժամանակավոր ներկա են համարվել այն անձինք, ովքեր մարդահամարի հաշվառման պահին գտնվել են տվյալ համայնքում, սակայն նրանց մշտական բնակավայրը գտնվել է տվյալ համայնքի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս և նրանց գտնվելու տևողությունը՝ նշված պահի դրությամբ, չի գերազանցել մեկ տարուց:

Մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշում ներառվել են մարդահամարի ժամանակ մշտապես ներկա և ժամանակավոր բացակա հաշվառված անձանց ընդհանուր թվաքանակները:

Ժամանակավոր բացակա են համարվել այն անձինք, ովքեր մշտապես (սովորաբար) բնակվել են տվյալ համայնքում, սակայն մարդահամարի հաշվառման պահին գտնվել են տվյալ համայնքի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս, և նրանց բացակայության տևողությունը՝ նշված պահի դրությամբ, չի գերազանցել մեկ տարուց:

ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆ